# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01

ք.Երևան «17» 02 2017 թվական

**Մատակարար՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 43), ի դեմս Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն Հ.Թադևոսյանի, որը գործում է համաձայն Կանոնադրության և ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի կողմից տրված N 0109 գործունեության լիցենզիայի հիման վրա, մի կողմից, և **Բաժանորդ՝** ՀՀ Պաշտպանության նախարարությունը (ՀՀ, ք.Երևան, Բագրևանդի 5), ի դեմս Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյանի, որը գործում է համաձայն նախարարության Կանոնադրության, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաշվառքի սարքի /կայանի/ տվյալները փոփոխել ըստ կից ներկայացված ցանկի (Սահմանազատման և առաքման կետերի մասին) (Հավելված N3):
2. 2017թ. մատակարարվելիք գազի տարեկան քանակությունը կազմում է 11105.0 հազ. խ.մ. (Բաշխումը ըստ եռամսյակների տես Հավելված N2):
3. Մատակարարը ՀՀ ՊՆ Զորամասերին (հավելված 3-ում նշված) մատակարարված բնական գազի դիմաց ներկայացնում է միասնական վճարման փաստաթուղթ (ՀՎՀՀ 02703824 հարկային հաշվով):
4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրման պահից:
5. Կողմերը սահմանում են, որ սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 2017թ. հունվարի 1-ից (հիմք ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդ. 441, 2-րդ կետ):
6. Համաձայնագիրը կազմված է 1 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի N2 և N3 Հավելվածները բաղկացած են 4 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
7. Սույն Համաձայնագիրը համարվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և ՀՀ Պաշտպանության նախարարության միջև 28.08.2013թ. կնքված N ARG Ս 19 0 08 13 0006 պայմանագրի անբաժանելի մասը:
8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

| **Մատակարար** | **Բաժանորդ** |
|---|---|
| «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | ՀՀ Պաշտպանության նախարարություն |
| ՀՀ, ք. Երևան Թբիլիսյան խճուղի 43<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 24701 00526910000<br>ՀՎՀՀ 00046317 | ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011117034<br>ՀՎՀՀ 02703824 |
| Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն | Պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ |
| Հ.Թադևոսյան | Կ.Կարապետյան |

Հավելված N 2
Բնական գազի մատակարարման
/Մատակարար- ոչ կենցաղային
սպառում ունեցող Բաժանորդ/
2013 թվականի 08 «28»

N ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի

## Համաձայնագիր

## Գազի մատակարարման չափաքանակների մասին

Սույն համաձայնագրով Բաժանորդը և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են մատակարարվող գազի հետևյալ չափաքանակները.

| Ամիս | /հազար խորանարդ մետր (Ցելսիուսի 20 աստիճան ջերմաստիճանի և 101.325 կՊա կամ 1.033227 կգ/սմ2 ճնշման պայմաններում)/ | նվազագույն ժամային ծախս | առավելագույն ժամային ծախս | Գազի մատակարարումը սահմանափակման ռեժիմում |
|---|---|---|---|---|
| Հունվար | 2202.200 | Ջրամասի հաշվառքի սարքի նվազագույն սահմանը | Ջրամասի հաշվառքի սարքի վերին սահմանը, բայց ոչ ավել, քան 2 ժամ/օր | Ըստ «ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի» սահմանափակումների հաստատված ռեժիմների |
| Փետրվար | 2061.400 | | | |
| Մարտ | 1646.800 | | | |
| Ընդամենը | 5910.400 | | | |
| Ապրիլ | 144.100 | | | |
| Մայիս | 127.600 | | | |
| Հունիս | 127.600 | | | |
| Ընդամենը | 399.300 | | | |
| Հուլիս | 127.600 | | | |
| Օգոստոս | 127.600 | | | |
| Սեպտեմբեր | 127.600 | | | |
| Ընդամենը | 382.800 | | | |
| Հոկտեմբեր | 334.300 | | | |
| Նոյեմբեր | 1874.600 | | | |
| Դեկտեմբեր | 2203.600 | | | |
| Ընդամենը | **4412.500** | | | |
| 2017 թ. | 11105.000 | | | |

Մատակարար

Հ. Թադևոսյան
/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

«____» ________ 2017 թվական
Կ.Տ.

Բաժանորդ

Լ. [illegible]յան
/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

«__» ________ 2017 թվական

Հավելված N 3
Բնական գազի մատակարարման
/Մատակարար- ոչ կենցաղային
սպառում ունեցող Բաժանորդ/
2013 թվականի 08 «28»

N ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի

# Համաձայնագիր

## Սահմանազատման և առաքման կետերի մասին

Գազի առաքման կետ է համարվում՝ Գ/Մ-երի հաշվառքի սարքերը:
Գազի սահմանազատման կետ է համարվում՝ ներմիացման կետը:

### Հաշվառքի սարքի /կայանի/ տվյալները

| ՀՀ | Ջրամասերի | | Հաշվառքային սարքի | | |
|---|---|---|---|---|---|
| | համարը | տեղակայման վայրը | տիպը | գործարանային համարը | տեղադրման տարեթիվը |
| 1 | Գ/Մ N 88865 | Երևան | G - 160 | 160001240 | 2016թ. |
| 2 | Հանրապ. Գ/Կ | Երևան | G -250 | 8970 | 2015թ. |
| 3 | Գ/Մ N 19450 | Երևան | G - 65 | 8563 | 2015թ. |
| 4 | Կենտրոն Գ/Կ | Երևան | G - 6 | 7336135 | 2014թ. |
| 5 | Գ/Մ N 51054 | Երևան | G - 160 | 42288 | 2015թ. |
| 6 | Գ/Մ N 51054 | Երևան | G - 10 | 10000133 | 2015թ. |
| 7 | Գ/Մ N 14203 | Երևան | G -250 | 7714 | 2015թ. |
| 8 | Գ/Մ N 24923 | Երևան | G -250 | 8795 | 2016թ. |
| 9 | Գ/Մ N 54574 | Երևան | G -250 | 7798 | 2015թ. |
| 10 | Գ/Մ N 14172 | Երևան | G -100 | 7477 | 2016թ. |
| 11 | Գ/Մ N 25149 | Երևան | G -100 | 9073 | 2016թ. |
| 12 | Գ/Մ N 95532 | Երևան | G -100 | 7947 | 2016թ. |
| 13 | Գ/Մ N 93353 | Երևան | G -160 | 7748 | 2015թ. |
| 14 | Շահումյան Գ/Կ | Երևան | G -25 | 25062034 | 2016թ. |
| 15 | Գ/Մ N 24236 | Երևան | G -250 | 7794 | 2016թ. |
| | | Երևան | G -25 | 25062010 | 2016թ. |
| 16 | Գ/Մ N 42285 | Երևան | G-100 | 7809 | 2016թ. |
| 17 | Գ/Մ N 10724 | Երևան | G - 40 | 40057122 | 2015թ. |
| 18 | Գ/Մ N 32822 | Երևան | G -100 | 100028522 | 2016թ. |
| 19 | Գ/Մ N 50552 | Երևան | G -100 | 100028546 | 2016թ. |
| 20 | Գ/Մ N 55537 | Երևան | G - 65 | 65057123 | 2016թ. |
| 21 | Գ/Մ N 59559 | Երևան | G -160 | 160001218 | 2016թ. |
| 22 | Գ/Մ N 74352 | Երևան | G -250 | 7488 | 2015թ. |
| 23 | Գ/Կ Նոր Նորք | Երևան | G-10 | 10000833 | 2015թ. |
| 24 | Գ/Մ N 14244 | Գյումրի | G - 4 | 28461291 | 2014թ. |
| 25 | Գ/Մ N 55035 | Գյումրի | G -100 | 8406 | 2014թ. |
| 26 | Գ/Մ N 56952 | Գյումրի | G -100 | 8348 | 2014թ. |
| 27 | Գ/Մ N 56952 | Գյումրի | G - 4 | 5819233 | 2013թ. |
| | | Գյումրի | G - 4 | 5817402 | 2013թ. |
| | | Գյումրի | G - 4 | 5818263 | 2013թ. |
| | | Գյումրի | G - 4 | 5817193 | 2013թ. |
| 28 | Գ/Մ N 69334 | Գուսանա | G - 40 | 40002234 | 2006թ. |
| 29 | Գ/Մ N 59744 | Գյումրի | G -100 | 10000112 | 2011թ. |
| 30 | Գյումրու ԳԿ | Գյումրի | G -10 | 10509214 | 2016թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31 | Զ/Կ Ամասիա | Ամասիա | G - 4 | 04039154 | 2015թ. |
| 32 | Զ/Մ N 21833 | Վանաձոր | G -100 | 8181 | 2016թ. |
| 33 | Զ/Մ N 40133 | Վանաձոր | G -100 | 8179 | 2015թ. |
| 34 | Զ/Մ N 37082 | Վանաձոր | G - 100 | 8203 | 2016 թ. |
| 35 | Զ/Մ N 63853 | Վանաձոր | G -250 | 0042338 | 2015թ. |
| 36 | Զ/Մ N 72035 | Վանաձոր | G - 100 | 8828 | 2016թ. |
| 37 | Զ/Մ N 31047 | Վանաձոր | G -16 | 16001049 | 2016թ. |
| 38 | Զ/Մ N 56039 | Վանաձոր | G - 6 | 2608140 | 2005թ. |
| 39 | Զ/Մ N 22083 | Վանաձոր | G - 6 | 2603812 | 2016թ. |
| | | | G - 6 | 2637505 | 2016թ. |
| 40 | Զ/Մ N 53620 | Փամբակ | G - 65 | 7499 | 2016թ. |
| 41 | Զ/Մ N 51556 | Ստեփանավան | G - 100 | 7504 | 2016թ. |
| 42 | Զ/Մ N 51556 | Պուշկինո | G - 100 | 8834 | 2015թ. |
| 43 | Զ/Մ N 73014 | Արովյան | G -100 | 100000162 | 2012թ. |
| 44 | Զ/Մ N 55076 | Բալահովիտ | G -100 | 100000107 | 2012թ. |
| 45 | Զ/Մ N 55261 | Լուսակերտ | G -100 | 112044 | 2013թ. |
| 46 | Զ/Մ N 45077 | Եղվարդ | G - 250 | 0042140 | 2015 թ. |
| 47 | Զ/Մ N 45077 | Եղվարդ | G - 160 | 160000090 | 2016թ. |
| 48 | Զ/Մ N 79512 | Պռոշյան | G - 65 | 65000145 | 2016թ. |
| 49 | Զ/Մ N 58831 | Արարատ | G - 4 | 3729055 | 2012թ. |
| | | | G - 6 | 006833629 | 2015թ. |
| 50 | Զ/Մ N 58831 | Արարատ | G -160 | 0039086 | 2016թ. |
| 51 | Զ/Մ N 76852 | Վեդի | G -160 | 160000040 | 2015թ. |
| 52 | Զ/Մ N 32277 | Արտաշատ | G -100 | 100000076 | 2015թ. |
| 53 | Զ/Մ N 43755 | Հայանիստ | G - 40 | 40057143 | 2015 թ. |
| 54 | Զ/Մ N 60925 | Արմավիր | G - 160 | 0041618 | 2015թ. |
| 55 | Զ/Մ N 41096 | Էջմիածին | G - 65 | 65000067 | 2015թ. |
| 56 | Զ/Մ N 15166 | Մերձավան | G -160 | 160001225 | 2016թ. |
| 57 | Զ/Մ N 25149 | Մերձավան | G -160 | 160001219 | 2016թ. |
| 58 | Զ/Մ N 43755 | Էջմիածին | G -160 | 160000068 | 2016թ. |
| 59 | Զ/Մ N 43755 | Էջմիածին | G - 4 | 8357752 | 2016թ. |
| 60 | Զ/Մ N 43755 | Մերձավան | G -160 | 160000640 | 2016թ. |
| 61 | Զ/Մ N 13516 | Էջմիածին | G -160 | 160000004 | 2015թ. |
| 63 | Զ/Մ N 51191 | Իջևան | G -100 | 7752 | 2015թ. |
| 64 | Զ/Մ N 51191 | Իջևան | G - 100 | 7757 | 2016թ. |
| 65 | Զ/Մ N 23734 | Իջևան | G - 25 | 25087569 | 2015թ. |
| 66 | Իջևանի Զ/Կ | Իջևան | G - 6 | 06002789 | 2014թ. |
| 67 | Զ/Մ N 81151 | Դիլիջան | G -100 | 8505 | 2015թ. |
| 68 | Զ/Մ N 18120 | Դիլիջան | G -400 | 8585 | 2016թ. |
| | | | G - 6 | 2774645 | 2012թ. |
| | | | G - 6 | 2676659 | 2012թ. |
| | | | G - 6 | 2725484 | 2012թ. |
| | | | G - 6 | 2676630 | 2012թ. |
| | | | G - 6 | 2721448 | 2012թ. |
| | | | G - 4 | 214004974 | 2016թ. |
| | | | G - 6 | 2651784 | 2012թ. |
| | | | G - 4 | 04053179 | 2014թ. |
| | | | G - 4 | 04046296 | 2014թ. |
| 69 | Զ/Մ N 21127 | գ. Արծվաբերդ | G - 65 | 65052098 | 2015 թ. |
| 70 | Զ/Մ N 27229 | Նոյեմբերյան | G -160 | 7762 | 2015թ. |
| | | | G - 4 | 1492917 | 2016թ. |
| 71 | Զ/Մ N 51036 | Բերդ | G - 40 | 40057127 | 2015թ. |
| 72 | Զ/Մ N 51036 | գ. Տավուշ | G - 40 | 40057131 | 2015թ. |
| 73 | Զ/Մ N 51036 | Պառավաքար | G - 25 | 25000481 | 2016թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 74 | Ջ/Մ N 80088 | Աշտարակ | G - 16 | 16160143 | 2015 թ. |
| 75 | Ջ/Կ Աշտարակ | Աշտարակ | G - 4 | 213022304 | 2014թ. |
| 76 | Ջ/Մ N 54850 | Մուղնի | G – 65 | 65000142 | 2015թ. |
| 77 | Ջ/Մ N 32236 | Մարտունի | G - 160 | 160000073 | 2016 թ. |
| 78 | Ջ/Կ Մարտունի | Մարտունի | G - 4 | 5683776 | 2014թ. |
| 79 | Ջ/Մ N 28233 | Մարտունի | G - 4 | 004082818 | 2015թ. |
| 80 | Ջ/Մ N 59016 | Վարդենիս | G - 100 | 7756 | 2016թ. |
| 81 | Ջ/Մ N 28418 | Կարճաղբյուր | G - 250 | 1525711043 | 2016թ. |
| 82 | Ջ/Մ N 62426 | Վարդենիս | G -65 | 7724 | 2016թ. |
| 83 | Ջ/Մ N 32236 | Լճաշեն | G -65 | 8816 | 2014թ. |
| 84 | Ջ/Մ N 25836 | Ճամբարակ | G - 40 | 0014962 | 2016թ. |
| 85 | Ջ/Մ N 50869 | Ագարակ | G – 160 | 160000178 | 2015թ. |
| 86 | Ջ/Մ N 54122 | Կապան | G - 100 | 100000071 | 2015թ. |
| 87 | Ջ/Մ N 54122 | Կապան | G - 6 | 2703215 | 2012թ. |
| | | | G - 6 | 2703075 | 2012թ. |
| 88 | Ջ/Մ N 20666 | Կապան | G -160 | 160000138 | 2015թ. |
| 89 | Ջ/Մ N 32373 | Կապան | G - 25 | 25104091 | 2017թ. |
| 90 | Ջ/Մ N 16396 | Գորիս | G -16 | 16210576 | 2015թ. |
| 91 | Ջ/Մ N 16396 | («Գորիս-9» զինավան) | G - 6 | 06002857 | 2016թ. |
| 92 | Ջ/Մ N 60369 | Գորիս | G - 160 | 8554 | 2015թ. |
| 93 | Ջ/Մ N 60369 | Խնձորեսկ | G - 100 | 8524 | 2015թ. |
| 94 | Ջ/Մ N 60369 | Ջանգեր | G - 160 | 8553 | 2015թ. |
| 95 | Ջ/Մ N 83117 | Սղխի գյոլ | G - 65 | 65000356 | 2016թ. |
| 96 | Ջ/Մ N 60913 | Սիսիան | G - 65 | 65052084 | 2015թ. |
| 97 | Ջ/Մ N 60913 | Սիսիան | G -100 | 7948 | 2015թ. |
| 98 | Ջ/Մ N 70011 | Սիսիան | G -160 | 160000308 | 2014թ. |
| 99 | Ջ/Մ N 32424 | Սիսիան | G - 25 | 25087616 | 2015թ. |
| 100 | Ջ/Կ Սիսիան | Սիսիան | G - 6 | 7152584 | 2013թ. |
| 101 | Ջ/Մ N 37564 | Նորավան | G -160 | 160000036 | 2015թ. |
| 102 | Ջ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G -100 | 8155 | 2015թ. |
| 103 | Ջ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G - 4 | 215002111 | 2016թ. |
| 104 | Ջ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G - 4 | 4982584 | 2014թ. |
| 105 | Ջ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G - 6 | 2523558 | 2014թ. |
| 106 | Ջ/Մ N 70179 | Վայք | G - 100 | 8197 | 2016թ. |
| | | | | | |

Առևտրային է համարվում Ջ/Մ-ի հաշվառքի սարքը /կայանը/:

Առևտրային հաշվառքի սարքը /կայանը/ հանդիսանում է Ջ/Մ-ի սեփականությունը:

Առևտրային հաշվառքի սարքը /կայանը/ սպասարկում է ըստ պայմանագրի:

**Մատակարար**

Հ. Թադևոսյան

/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

«____» __________ 201_ թվական

Կ.Տ.

**Բաժանորդ**

Է. Կարապետյան

/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

__________ 2017 թվական

# Բնական գազի մատակարարման
## (Մատակարար - Բաժանորդ (կազմակերպություն))

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ARG Ա 19 0 08 13 0006

ք.Երևան «28» 08 2013 թվական

**Մատակարար**՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 43), ի դեմս Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն Վ.Հարությունյանի, որը գործում է համաձայն Կանոնադրության և ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի կողմից տրված N 0109 գործունեության լիցենզիայի հիման վրա, մի կողմից, և **Բաժանորդ**՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը (ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5), ի դեմս Պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա.Միրզաբեկյանի, որը գործում է համաձայն նախարարության Կանոնադրության, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
   1) *Հանձնաժողով*՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
   2) *ԳՄՕԿ*՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.
   3) *Հաշվարկային ամիս*՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:
   4) ***10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդ***՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան

երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 հազար խորանարդ մետրը (Ցելսիուսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ² ճնշման պայմաններում):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

1) սահմանազատման կետում ապահովել Բաժանորդի գազամատակարարումը՝ «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՕՍՏ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող **<u>հոտավետված</u>** բնական գազով.

2) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդին բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամրագրված ժամանակացույցով և չափաքանակներով (Հավելված №3).

3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով.

4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, կամ առևտրային հաշվառքի սարքերը կնքելու, կամ կնիքների առկայությունը ստուգելու, կամ բնական գազի որակական հատկանիշներն ուսումնասիրելու նպատակով բնական գազի նմուշառման համար.

5) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.

6) գազասպառման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց ահազանգով դադարեցնել նրա գազամատակարա-

բումը, վերսկսել այն դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին.

7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացառությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում.

8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումի հիման վրա դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.

2) չօգտագործել բնական գազը կամ գազասպառման համակարգը տեխնիկական պայմաններով, նախագծով և գազասարքավորումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով.

3) գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպառումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին.

4) իր նախաձեռնությամբ գազասպառման համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց հզորության, սպառման ծավալների) կատարելու համար, ԳՄՕԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին.

5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:

Մատակարարի ներկայացուցչի մուտքը գազասպառման համակարգի տեղակայման տարածք իրականացվում է՝ շուրջօրյա.

6) իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից օգտագործվող) գազասպառման համակարգի տեղակայման տարածքը օտարելու (օգտագործման իրավունքը դադարելու) դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու և պայմանագիրը լուծելու համար:

## 4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդն իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

7. 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինք Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:

8. Առևտրային հաշվառքի սարքի՝ այդ թվում նոր առևտրային հաշվառքի սարքի, տվյալները գրանցվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:

9. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառքի սարքն աշխատել է իր չափման ընդգրկույթից (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝

    1) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է <u>Qmin-ին</u> հավասար,

    2) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է <u>120</u> տոկոսին հավասար:

    Ճնշման անկման սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եղանակով՝ համաձայն ԳՕՍՏ 8.563-97-ի՝ «Հեղուկների և գազերի քանակության և ծախսի քանակության չափումը ճնշման փոփոխական անկման մեթոդով» և ԳՕՍՏ-8.586-2005-ի՝ «Հեղուկների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղացնող սարքերի միջոցով»: Այլ սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվառքի սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համապատասխանության սերտիֆիկատի:

## 5. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

11. Մատակարարվող բնական գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում՝ սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան սակագնի և մատակարարված բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարարված բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճար կամ վճարման այլ երաշխիքներ պահանջելու դեպքերն ու կարգը սահմանվում է ԳՄՕԿ-ով:

14. Բոլոր դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է 10 հազար խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց սույն պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար

չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

## 7. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք առեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

18. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 17-րդ կետում նշված իրավիճակների մասին հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:

19. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

20. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

21. Սույն պայմանագրի №2 և №3 հավելվածները տարածվում են 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:

22. Սույն պայմանագրի №4 հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց գազասպառման համակարգը տեղակայված է բազմաբնակարան շենքում:

23. Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը Բաժանորդին հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են

պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նշված ծանուցման վայրին, կամ էլեկտրոնային փոստով, եթե առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

24. Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրում նշված ծանուցման վայրի փոփոխության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել նոր ծանուցման վայրի վերաբերյալ:

25.Այն դեպքում, երբ Բաժանորդը գրավոր չի տեղեկացրել Մատակարարին իր ծանուցման վայրի փոփոխության մասին, և Մատակարարը կիրառել է փաստաթղթերի պատշաճ հանձնման բոլոր ձևերը, սակայն առկա չէ Բաժանորդի կողմից համապատասխան փաստաթղթերն ստացած լինելու հավաստումը, ապա Մատակարարի կողմից սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված, թեկուզ և Բաժանորդն այլևս այդ գտնվելու կամ բնակության վայրում չի գտնվում:

26.Մատակարարը և 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդը, ելնելով Բաժանորդի գազասպառման համակարգի առանձնահատկություններից, իրավունք ունեն սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանել լրացուցիչ պայմաններ:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

27.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

28.Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (որոնք բնական գազը ձեռք են բերում էլեկտրական կամ ջերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

29.Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

30.Սույն պայմանագիրը կարող է լուծվել.

1) Կողմերի փոխհամաձայնությամբ,
2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական գազի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի

դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

31. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

32. Հավելված №1 - Համաձայնագիր սահմանազատման և առաքման կետերի մասին

33. Հավելված №2 – Համաձայնագիր սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին

34. Հավելված №3 - Համաձայնագիր բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին

35. Հավելված №4 - Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

| Մատակարար | Բաժանորդ |
|---|---|
| ՙՀայՌուսգազարդ՚ ՓԲԸ | ՀՀ Պաշտպանության նախարարությունը |
| ՀՀ, ք. Երևան Թբիլիսյան խճուղի 43<br>ՙԱռէկսիմբանկ՚ ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն |
| Հ/Հ 23800 03097950300<br>ՀՎՀՀ 00046317 | Հ/Հ 900011117034 |
| Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն | ՙՊաշտպանության նախարարի տեղակալ- ՆՏԱ դեպարտամենտի պետ |
| ____________ Վ.Հարությունյան | ____________ Ա.Միրզաբեկյան |

Հավելված №1
Բնական գազի մատակարարման (Մատակարար-
Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ
հաստատված՝ 23 08 2013թ. կնքված
Թիվ ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Սահմանազատման և առաքման կետերի մասին

1. Բնական գազի առաքման կետ է համարվում՝ Զ/Մ-երի հաշվառման սարքերը:

2. Բնական գազի սահմանազատման կետ է համարվում՝ ներմիացման կետը:

**Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները**

| ՀՀ | Զորամասերի | | Հաշվառքային սարքի | | |
|---|---|---|---|---|---|
| | համարը | տեղակայման վայրը | տիպը | գործարանային համարը | տեղադրման տարեթիվը |
| 1 | Զ/Մ N 88865 | Երևան | ՌԳ -250 | 0700 | 1998թ. |
| 2 | Հանրապ. Զ/Կ | Երևան | ՌԳ -250 | 0809 | 1996թ. |
| 3 | Զ/Մ N 19450 | Երևան | ՌԳ -100 | 0682 | 2006թ. |
| 4 | Կենտրոն Զ/Կ | Երևան | G - 6 | 2230063 | 2006թ. |
| | | | G - 6 | 2192805 | 2006թ. |
| 5 | Զ/Մ N 51054 | Երևան | G -400 | 08233 | 2007թ. |
| | | | G -10 | 10000133 | 2012թ. |
| 6 | Զ/Մ N 14203 | Երևան | ՌԳ - 600 | 1528 | 1997թ. |
| 7 | Զ/Մ N 24923 | Երևան | ՌԳ - 400 | 0785 | 1999թ. |
| 8 | Զ/Մ N 24923 | ք. Երևան (Քանաքեռ) | ՌԳ-1000 | 0348 | 2003թ. |
| 9 | Զ/Մ N 68617 | Երևան | ՌԳ - 600 | 0525 | 1999թ. |
| 10 | Զ/Մ N 14172 | Երևան | ՌԳ - 600 | 1258 | 2000թ. |
| 11 | Զ/Մ N 25149 | Երևան | ՌԳ -100 | 0608 | 2001թ. |
| 12 | Զ/Մ N 95532 | Երևան | ՌԳ -100 | 0053 | 1998թ. |
| | | | ՌԳ - 40 | 0022 | 1998թ |
| 13 | Զ/Մ N 93353 | Երևան | ՌԳ - 400 | 0328 | 2001թ. |
| 14 | Շահումյան Զ/Կ | Երևան | G -25 | 25062034 | 2012թ. |
| 15 | Զ/Մ N 24236 | Երևան | ՌԳ - 600 | 1420 | 1997թ. |
| 16 | Զ/Մ N 42285 | Երևան | ՌԳ -100 | 0039 | 1998թ. |
| 17 | Զ/Մ N 10724 | Երևան | G - 40 | 40000122 | 2006թ. |
| 18 | Զ/Մ N 32822 | Երևան | G -100 | 10000119 | 2007թ. |
| 19 | Զ/Մ N 50552 | Երևան | G -100 | 10000032 | 2006թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | Ձ/Մ N 55537 | Երևան | G - 65 | 65004173 | 2006թ. |
| 21 | Ձ/Մ N 59559 | Երևան | G -160 | 16000003 | 2006թ. |
| 22 | Ձ/Մ N 74352 | Երևան | ՌԳ - 600 | 12826 | 2003թ. |
| 23 | Ձ/Մ N 90453 | Երևան | G -160 | 16000014 | 2006թ. |
| 24 | Ձ/Կ Նոր Նորք | Երևան | GS76010A | 1000833 | 2009թ. |
| 25 | Ձ/Մ N 14244 | Գյումրի | G - 6 | 9796025 | 2002թ. |
| 26 | Ձ/Մ N 55035 | Գյումրի | ՌԳ -100 | 2879 | 2004թ. |
| 27 | Ձ/Մ N 56952 | Գյումրի | ՌԳ -100 | 0167 | 2004թ. |
| 28 | Ձ/Մ N 69334 | Գյումրի | ՌԳ -100 | 3613 | 2006թ. |
| 29 | Ձ/Մ N 69334 | Գուսանա | G - 40 | 40002234 | 2005թ. |
| 30 | Ձ/Մ N 59744 | Գյումրի | G -100 | 10000112 | 2011թ. |
| 31 | Ձ/Մ N 21833 | Վանաձոր | ՌԳ -100 | 0919 | 2001թ. |
| 32 | Ձ/Մ N 40133 | Վանաձոր | ՌԳ -100 | 0859 | 2003թ. |
| 33 | Ձ/Մ N 37082 | Վանաձոր | G - 65 | 65000078 | 2008 թ. |
| 34 | Ձ/Մ N 63853 | Վանաձոր | G -250 | 41228 | 2012թ. |
| 35 | Ձ/Մ N 72035 | Վանաձոր | ՌԳ -100 | 0530 | 1999թ. |
| | | | G - 6 | 6940890 | 2012թ. |
| 36 | Ձ/Մ N 31047 | Վանաձոր | G -25 | 82660 | 2000թ. |
| 37 | Ձ/Մ N 56039 | Վանաձոր | G - 6 | 2608140 | 2005թ. |
| 38 | Ձ/Մ N 53620 | Փամբակ | G - 160 | 41635 | 2012 թ. |
| 39 | Ձ/Մ N 51556 | Ստեփանավան | ՌԳ - 400 | 0514 | 1998թ. |
| | | | ՌԳ -100 | 0430 | 1998թ. |
| 40 | Ձ/Մ N 73014 | Աբովյան | G -100 | 10000162 | 2012թ. |
| 41 | Ձ/Մ N 55076 | Բալահովիտ | ՌԳ - 400 | 12281 | 1997թ. |
| 42 | Ձ/Մ N 55261 | Լուսակերտ | ՌԳ -100 | 1120 | 1998թ. |
| 43 | Ձ/Մ N 58831 | Արարատ | G - 4 | 3729055 | 2007թ. |
| | | | G - 6 | 6833629 | 2012թ. |
| | | | DKZ G-160 | 0021101 | 2012թ. |
| 44 | Ձ/Մ N 76852 | Վեդի | G -160 | 160000040 | 2005թ. |
| 45 | Ձ/Մ N 32277 | Արտաշատ | G - 6 | 2465797 | 2000թ. |
| | | | G -100 | 10000007 | 2000թ. |
| 46 | Ձ/Մ N 43755 | Հայանիստ | G - 40 | 40000570 | 2012 թ. |
| 47 | Ձ/Մ N 60925 | Արմավիր | G - 250 | 41618 | 2012թ. |
| 48 | Ձ/Մ N 41096 | Էջմիածին | G - 25 | 26744 | 2001թ. |
| 49 | Ձ/Մ N 15166 | Մերձավան | G -160 | 160000016 | 2006թ. |
| 50 | Ձ/Մ N 25149 | Մերձավան | G -160 | 160000030 | 2003թ. |
| 51 | Ձ/Մ N 43755 | Էջմիածին | G -160 | 160000006 | 2006թ. |
| 52 | Ձ/Մ N 43755 | Մերձավան | G -160 | 160000035 | 2008 թ. |
| 53 | Ձ/Մ N 13516 | Էջմիածին | G -160 | 160000004 | 2006թ. |
| 54 | Ձ/Մ N 51191 | Իջևան | G -100 | 7750 | 2013թ. |
| | | | G -100 | 7695 | 2012թ. |
| | | | G - 6 | 2565395 | 2010թ. |
| | | | G - 6 | 2553734 | 2010թ. |
| 55 | Իջևանի Ձ/կ | Իջևան | G - 6 | 06002789 | 2011թ. |
| 56 | Ձ/Մ N 41507 | Դիլիջան | G -100 | 7753 | 2012թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 57 | Ջ/Մ N 18120 | Դիլիջան | G -400 | 7685 | 2013թ. |
| | | | G - 4 | 004201844 | 2000թ. |
| | | | G - 6 | 2774645 | 2012թ. |
| | | | G - 6 | 2676659 | 2012թ. |
| | | | G - 6 | 2725488 | 2012թ. |
| | | | G - 6 | 2676630 | 2012թ. |
| | | | G - 6 | 2721448 | 2012թ. |
| | | | G - 4 | 05543528 | 2012թ. |
| | | | G - 6 | 2651784 | 2012թ. |
| 58 | Ջ/Մ N 27229 | Նոյեմբերյան | G -160 | 7762 | 2012թ. |
| | | | G - 6 | 6449713 | 2011թ. |
| 59 | Ջ/Մ N 51036 | Տավուշ | G - 40 | 40029300 | 2006թ. |
| | | | G - 40 | 40029301 | 2006թ. |
| | | | G - 25 | 25000481 | 2006թ. |
| 60 | Ջ/Մ N 45077 | Եղվարդ | G - 160 | 160000090 | 2008 թ. |
| 61 | Ջ/Մ N 25651 | Աշտարակ | G - 16 | 16160143 | 2008 թ. |
| 62 | Ջ/Կ Աշտարակ | Աշտարակ | G - 4 | 005882903 | 2009թ. |
| 63 | Ջ/Մ N 54850 | Մուղնի | G – 65 | 65000142 | 2010թ. |
| 64 | Ջ/Մ N 79512 | Պռոշյան | G - 160 | 160000156 | 2010թ. |
| 65 | Ջ/Մ N 21127 | Մեհրաբ | G - 65 | 65000073 | 2008 թ. |
| 66 | Ջ/Մ N 32236 | Մարտունի | ՌԳ -100 | 0111 | 2002թ. |
| | | | G - 160 | 160000073 | 2008 թ. |
| 67 | Ջ/Կ Մարտունի | Մարտունի | G - 4 | 4035610 | 2011թ. |
| 68 | Ջ/Մ N 28233 | Մարտունի | G - 4 | 004082818 | 2009թ. |
| 69 | Ջ/Մ N 59016 | Վարդենիս | G - 100 | 7756 | 1999թ. |
| 70 | Ջ/Մ N 28418 | Կարճաղբյուր | ՌԳ - 250 | 1111 | 2004թ. |
| 71 | Ջ/Մ N 62426 | Վարդենիս | ՌԳ -100 | 0329 | 2005թ. |
| 72 | Ջ/Մ N 32236 | Լճաշեն | ՌԳ - 40 | 0328 | 2004թ. |
| 73 | Ջ/Մ N 55595 | Սևան | G - 4 | 005882502 | 2009թ. |
| 74 | Ջ/Մ N 25836 | Ճամբարակ | G - 40 | 14962 | 2002թ. |
| 75 | Ջ/Մ N 54122 | Կապան | G - 100 | 100000071 | 2012թ. |
| | | | G - 6 | 2703075 | 2012թ. |
| | | | G - 6 | 2703215 | 2012թ. |
| 76 | Ջ/Մ N 83117 | Կապան | G -160 | 160000021 | 2012թ. |
| 77 | Ջ/Մ N 16396 | Գորիս | G -16 | 16140157 | 2012թ. |
| 78 | Ջ/Մ N 60369 | Գորիս | ՌԳ -250 | 0062 | 2002թ. |
| | | | ՌԳ -250 | 1928 | 2006թ. |
| | | | ՌԳ -100 | 0057 | 2009թ. |
| 79 | Ջ/Մ N 83117 | Աղվի գյուղ | G - 65 | 65000356 | 2012թ. |
| 80 | Ջ/Մ N 60913 | Սիսիան | G -100 | 7948 | 2013թ. |
| | | | G - 65 | 65000191 | 2012թ. |
| 81 | Ջ/Մ N70011 | Սիսիան | G -160 | 160000029 | 2009թ. |
| 82 | Ջ/Կ Սիսիան | Սիսիան | G - 6 | 7152584 | 2013թ. |
| 83 | Ջ/Մ N 20666 | Նորավան | G -160 | 160000027 | 2006թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 84 | Ջ/Մ N 27527 | Եղեգնաձոր | ՌԳ - 400 | 0933 | 2011թ. |
| | | | G - 4 | 005869253 | 2011թ. |
| 85 | Ջ/Մ N 55898 | Եղեգնաձոր | G - 6 | 60003242 | 2011թ. |
| 86 | Ջ/Մ N 50869 | Ազատավ | G – 160 | 160000178 | 2011թ. |
| 87 | Ջ/Մ N 70179 | Վայք | ՌԳ -250 | 0440 | 2000թ. |

3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է մատակարարի սեփականությունը:
4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելիությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Տեղադրման վայրը | Տեղադրման ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |

5. Հսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:

Մատակարար՝

Վ. Հարությունյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«__»__________2013 թվական

Կ.Տ.

Բաժանորդ՝

Ա. Միրզաբեկյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«__»__________2013 թվական

Կ.Տ.

Հավելված №2
Բնական գազի մատակարարման (Մատակարար-
Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ
հաստատված "28 03" 2013թ. կնքված
Թիվ ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին

1. Սույն հավելվածը տարածվում է 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
2. Սահմանազատման կետում Մատակարարը պարտավոր է ապահովել բնական գազի հետևյալ ճնշումը՝ 2,5-5 կՊԱ՝
   պայմանով, որ Բաժանորդը պահպանում է սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանված չափաքանակները:
3. Սույն պայմանագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները չբավարարող բնական գազը համարվում է անպատշաճ որակի: Այդպիսի բնական գազ մատակարարելու դեպքում Մատակարարը պարտավոր է 8 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 48 ժամում Բաժանորդին տեղեկացնել մատակարարվող բնական գազի փաստացի որակի մասին:
4. Բաժանորդն իրավունք ունի չընդունել անպատշաճ որակի բնական գազը և Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ չընդունված բնական գազի արժեքի 2 տոկոսի չափով: Բաժանորդը պարտավոր է տեղեկացնել Մատակարարին անպատշաճ որակի բնական գազը չընդունելու վերաբերյալ: Բոլոր դեպքերում, Բաժանորդին մատակարարված գազը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված:
5. Եթե Բաժանորդն ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է անպատշաճ որակի գազը, ապա սպառված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով:

| Մատակարար՝ | Բաժանորդ՝ |
| --- | --- |
| Վ. Հարությունյան | Ա. Միրզաբեկյան |
| (անունը, ազգանունը, պաշտոնը) | (անունը, ազգանունը, պաշտոնը) |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| «__»__________2013 թվական | «__»__________2013 թվական |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված №3
Բնական գազի մատակարարման (Մատակարար-
Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176 որոշմամբ
հաստատված "27" __02__ 2013թ. կնքված
Թիվ ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին

1. Սույն հավելվածը տարածվում է 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
2. Սույն համաձայնագրով Բաժանորդը և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են մատակարարվող գազի հետևյալ չափաքանակները.

(հազար խորմ)

| ԱՄԻՍՆԵՐ | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | ԸՆԴԱՄԵՆԸ 2013 թվական |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ | | | | | | | 130.3 | 130.3 | 130.3 | 130.3 | 1042.2 | 2314.5 | 3877.9 |

3. Հաջորդ օրացուցային տարվա համար բնական գազի անհրաժեշտ չափաքանակների վերաբերյալ տեղեկատվությունը Բաժանորդը Մատակարարին է ներկայացնում օրացուցային տարին սկսվելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ: Սույն կետում նշված տեղեկատվությունը Բաժանորդի կողմից չներկայացվելու դեպքում, հաջորդ օրացուցային տարում մատակարարվող գազի չափաքանակներ են ընդունվում տվյալ ընթացիկ օրացուցային տարվա չափաքանակները:
4. Մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակների փոփոխությունը կատարվում է Կողմերի փոխհամաձայնությամբ: Բաժանորդը

մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված ամսական չափաքանակի փոփոխման վերաբերյալ առաջարկությունը պարտավոր է Մատակարարին ներկայացնել Հաշվարկային ամսվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

5. Եթե Մատակարարը չի մատակարարում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակները, ապա Բաժանորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ չմատակարարված բնական գազի արժեքի 0.5%-ի չափով:
6. Եթե Բաժանորդը չի ընդունում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակների ավելի քան 25 տոկոսը, ապա Մատակարարն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ չընդունված բնական գազի արժեքի 0.5%-ի չափով:
7. Կողմերը ազատվում են սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում սահմանված պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է ԳՄՕԿ-ով սահմանված բնական գազի մատակարարման ընդհատման, դադարեցման կամ սահմանափակման պայմաններով:
8. ____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________:
9. Սույն համաձայնագրի 8-րդ կետում Կողմերի կողմից սահմանվող՝ Բաժանորդի գազապարման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված լրացուցիչ պայմանները, չեն կարող հակասել ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված պայմաններին:

Մատակարար`

Վ. Հարությունյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«__»__________2013 թվական

Կ.Տ.

Բաժանորդ

Ա. Միրզաբեկյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

«__»__________2013 թվական

Կ.Տ.

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01-2018

28.08.2013թ. կնքված N ARG Ս 19 0 08 13 0006 պայմանագրի

ք.Երևան «28» 02 2018 թվական

**Մատակարար՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, 43), ի դեմս Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն Հ.Թադևոսյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության և ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի կողմից տրված N 0109 գործունեության լիցենզիայի հիման վրա, մի կողմից, և **Բաժանորդ՝** ՀՀ Պաշտպանության նախարարությունը (ՀՀ, ք.Երևան, Բագրևանդի 5), ի դեմս Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյանի, որը գործում է համաձայն նախարարության Կանոնադրության, մյուս կողմից, ղեկավարվելով Կողմերի միջև 28.08.2013թ. կնքված N ARG Ս 19 0 08 13 0006 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 29-րդ կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի N1 հավելվածի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի:
2. Պայմանագրի N3 հավելվածի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N2 հավելվածի:
3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու պահից:
4. Կողմերը սահմանում են, որ Համաձայնագրի պայմանները կիրառվում են 2018թ. հունվարի 1-ից իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ (հիմք ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդ. 441, 2-րդ կետ):
5. Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

**Մատակարար**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Վարչության նախագահ-
Գլխավոր տնօրեն

________ [illegible]յան

**Բաժանորդ**

ՀՀ Պաշտպանության նախարարություն

Պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

________ Կ.Կարապետյան

Հավելված N 1
Բնական գազի մատակարարման
(Մատակարար - Բաժանորդ (կազմակերպություն))
28.08.2013 թ. N ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի
«28» ...02... 2018թ. N 01-2018 Լրացուցիչ Համաձայնագրի

**«Համաձայնագիր**

**Սահմանազատման և առաքման կետերի մասին**

2. Գազի սահմանազատման կետ է համարվում՝ ներմիացման կետը:

Հաշվառքի սարքի /կայանի/ տվյալները

| ՀՀ | Զորամասերի | | Հաշվառքային սարքի | | |
|---|---|---|---|---|---|
| | համարը | տեղակայման վայրը | տիպը | գործարանային համարը | տեղադրման տարեթիվը |
| 1 | Զ/Մ N 88865 | Երևան | G – 160 | 160001240 | 2016թ. |
| 2 | Հանրապ. Զ/Կ | Երևան | G -250 | 8970 | 2015թ. |
| 3 | Զ/Մ N 19450 | Երևան | G – 65 | 8563 | 2015թ. |
| 4 | Կենտրոն Զ/կ | Երևան | G – 6 | 7336135 | 2014թ. |
| 5 | Զ/Մ N 51054 | Երևան | G – 160 | 42288 | 2015թ. |
| 6 | Զ/Մ N 51054 | Երևան | G – 10 | 10000133 | 2015թ. |
| 7 | Զ/Մ N 14203 | Երևան | G -250 | 7714 | 2015թ. |
| 8 | Զ/Մ N 24923 | Երևան | G -250 | 8795 | 2016թ. |
| 9 | Զ/Մ N 54574 | Երևան | G -250 | 7798 | 2015թ. |
| 10 | Զ/Մ N 25149 | Երևան | G -100 | 9073 | 2016թ. |
| 11 | Զ/Մ N 95532 | Երևան | G -100 | 7947 | 2016թ. |
| 12 | Զ/Մ N 93353 | Երևան | G -160 | 7748 | 2015թ. |
| 13 | Շահումյան Զ/կ | Երևան | G -25 | 25062034 | 2016թ. |
| 14 | Զ/Մ N 24236 | Երևան | G -250 | 7794 | 2016թ. |
| | | Երևան | G -25 | 25062010 | 2016թ. |
| 15 | Զ/Մ N 42285 | Երևան | G-100 | 7809 | 2016թ. |
| 16 | Զ/Մ N 10724 | Երևան | G – 40 | 40057122 | 2015թ. |
| 17 | Զ/Մ N 32822 | Երևան | G -100 | 100028522 | 2016թ. |
| 18 | Զ/Մ N 50552 | Երևան | G -100 | 100028546 | 2016թ. |
| 19 | Զ/Մ N 59559 | Երևան | G -160 | 160001218 | 2016թ. |
| 20 | Զ/Մ N 74352 | Երևան | G -250 | 7488 | 2015թ. |
| 21 | Զ/Կ Նոր Նորք | Երևան | G-10 | 10000833 | 2015թ. |
| 22 | Զ/Մ N 14244 | Գյումրի | G – 4 | 28461291 | 2014թ. |
| 23 | Զ/Մ N 55035 | Գյումրի | G -100 | 8406 | 2014թ. |
| 24 | Զ/Մ N 56952 | Գյումրի | G -100 | 8348 | 2014թ. |
| 25 | Զ/Մ N 56952 | Գյումրի | G – 4 | 5819233 | 2013թ. |
| | | Գյումրի | G – 4 | 5817402 | 2013թ. |
| | | Գյումրի | G – 4 | 5818263 | 2013թ. |
| | | Գյումրի | G – 4 | 5817193 | 2013թ. |
| 26 | Զ/Մ N 69334 | Գուսանա | G – 40 | 40002234 | 2006թ. |
| 27 | Զ/Մ N 53661 | Գյումրի | G -100 | 10000112 | 2017թ. |
| 28 | Գյումրու ԶԿ | Գյումրի | G -10 | 10509214 | 2016թ. |
| 29 | Զ/Կ Ամասիա | Ամասիա | G – 4 | 04039154 | 2015թ. |
| 30 | Զ/Մ N 40133 | Վանաձոր | G -100 | 8179 | 2015թ. |
| 31 | Զ/Մ N 37082 | Վանաձոր | G – 100 | 8203 | 2016 թ. |
| 32 | Զ/Մ N 37082Ն | Վանաձոր | G -100 | 8181 | 2016թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33 | Ջ/Մ N 37082Կ | Վանաձոր | G -16 | 16001049 | 2016թ. |
| 34 | Ջ/Մ N 63853 | Վանաձոր | G -250 | 0042338 | 2015թ. |
| 35 | Ջ/Մ N 72035 | Վանաձոր | G – 100 | 8828 | 2016թ. |
| 36 | Ջ/Մ N 56039 | Վանաձոր | G – 6 | 2608140 | 2005թ. |
| 37 | Ջ/Մ N 22083 | Վանաձոր | G – 6 | 2603812 | 2016թ. |
| | | | G – 6 | 2637505 | 2016թ. |
| 38 | Ջ/Մ N 53620 | Փամբակ | G – 65 | 7499 | 2016թ. |
| 39 | Ջ/Մ N 51556 | Ստեփանավան | G – 100 | 7504 | 2016թ. |
| 40 | Ջ/Մ N 51556 | Պուշկինո | G – 100 | 8834 | 2015թ. |
| 41 | Ջ/Մ N 73014 | Աբովյան | G -100 | 100000162 | 2012թ. |
| 42 | Ջ/Մ N 55076 | Բալահովիտ | G -100 | 100000107 | 2012թ. |
| 43 | Ջ/Մ N 55261 | Լուսակերտ | G -100 | 112044 | 2013թ. |
| 44 | Ջ/Մ N 95532 | Ջառ | G – 100 | 100960062 | 2017թ. |
| 45 | Ջ/Մ N 43755 | Չորաղբյուր | G – 40 | 40073707 | 2017թ. |
| 46 | Ջ/Մ N 45077 | Եղվարդ | G – 250 | 0042140 | 2015 թ. |
| 47 | Ջ/Մ N 45077 | Եղվարդ | G – 160 | 160000090 | 2016թ. |
| 48 | Ջ/Մ N 24923 | Եղվարդ | G -65 | 65000302 | 2008թ. |
| 49 | Ջ/Մ N 79512 | Պռոշյան | G – 65 | 65000145 | 2016թ. |
| 50 | Ջ/Մ N 58831 | Արարատ | G – 4 | 3729055 | 2012թ. |
| | | | G – 6 | 006833629 | 2015թ. |
| 51 | Ջ/Մ N 58831 | Արարատ | G -160 | 0039086 | 2016թ. |
| 52 | Ջ/Մ N 76852 | Վեդի | G -160 | 160000040 | 2015թ. |
| 53 | Ջ/Մ N 32277 | Արտաշատ | G -100 | 100000076 | 2015թ. |
| 54 | Ջ/Մ N 43755 | Հայանիստ | G – 40 | 40057143 | 2015 թ. |
| 55 | Ջ/Մ N 60925 | Արմավիր | G – 160 | 0041618 | 2015թ. |
| 56 | Ջ/Մ N 41096 | Էջմիածին | G – 65 | 65000067 | 2015թ. |
| 57 | Ջ/Մ N 15166 | Մերձավան | G -160 | 160001225 | 2016թ. |
| 58 | Ջ/Մ N 25149 | Մերձավան | G -160 | 160001219 | 2016թ. |
| 59 | Ջ/Մ N 43755 | Էջմիածին | G -160 | 160000068 | 2016թ. |
| 60 | Ջ/Մ N 43755 | Էջմիածին | G – 4 | 8357752 | 2016թ. |
| 61 | Ջ/Մ N 43755 | Մերձավան | G -160 | 160000640 | 2016թ. |
| 62 | Ջ/Մ N 13516 | Էջմիածին | G -160 | 160000004 | 2015թ. |
| 63 | Ջ/Մ N 51191 | Իջևան | G -250 | 8594 | 2017թ. |
| 64 | Ջ/Մ N 51191 | Իջևան | G – 100 | 7752 | 2015թ. |
| 65 | Ջ/Մ N 28073 | Իջևան | G – 100 | 7757 | 2015թ. |
| 66 | Ջ/Մ N 23734 | Իջևան | G – 25 | 25087569 | 2015թ. |
| 67 | Իջևանի Ջ/կ | Իջևան | G – 6 | 06002789 | 2014թ. |
| 68 | Ջ/Մ N 81151 | Դիլիջան | G -100 | 8505 | 2015թ. |
| 69 | Ջ/Մ N 18120 | Դիլիջան | G -400 | 8585 | 2016թ. |
| | | | G – 6 | 2774645 | 2012թ. |
| | | | G – 6 | 2676659 | 2012թ. |
| | | | G – 6 | 2725484 | 2012թ. |
| | | | G – 6 | 2676630 | 2012թ. |
| | | | G – 6 | 2721448 | 2012թ. |
| | | | G – 4 | 214004974 | 2016թ. |
| | | | G – 6 | 2651784 | 2012թ. |
| | | | G – 4 | 04053179 | 2014թ. |
| | | | G – 4 | 04046296 | 2014թ. |
| 70 | Ջ/Մ N 21127 | գ. Արծվաբերդ | G – 65 | 65052098 | 2015 թ. |
| 71 | Ջ/Մ N 27229 | Նոյեմբերյան | G -160 | 7762 | 2015թ. |
| | | | G – 4 | 1492917 | 2016թ. |
| 72 | Ջ/Մ N 51036 | Բերդ | G – 40 | 40057127 | 2015թ. |
| 73 | Ջ/Մ N 51036 | գ. Կավուշ | G – 40 | 40057131 | 2015թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 74 | Զ/Մ N 51036 | Պառավաքար | G – 25 | 25000481 | 2016թ. |
| 75 | Զ/Մ N 80088 | Աշտարակ | G – 16 | 16160143 | 2015 թ. |
| 76 | Զ/Կ Աշտարակ | Աշտարակ | G – 4 | 213022304 | 2014թ. |
| 77 | Զ/Մ N 54850 | Մուղնի | G – 65 | 65000142 | 2015թ. |
| 78 | Զ/Մ N 32236 | Մարտունի | G – 160 | 160000073 | 2016 թ. |
| 79 | Զ/Կ Մարտունի | Մարտունի | G – 4 | 5683776 | 2014թ. |
| 80 | Զ/Մ N 28233 | Մարտունի | G – 4 | 004082818 | 2015թ. |
| 81 | Զ/Մ N 59016 | Վարդենիս | G - 100 | 7756 | 2016թ. |
| 82 | Զ/Մ N 28418 | Կարճաղբյուր | G – 250 | 1525711043 | 2016թ. |
| 83 | Զ/Մ N 62426 | Վարդենիս | G -65 | 7724 | 2016թ. |
| 84 | Զ/Մ N 32236 | Լճաշեն | G -65 | 8816 | 2014թ. |
| 85 | Զ/Մ N 25836 | Ճամբարակ | G – 40 | 0014962 | 2016թ. |
| 86 | Զ/Մ N 50869 | Ագարակ | G – 160 | 160000178 | 2015թ. |
| 87 | Զ/Մ N 54122 | Կապան | G – 100 | 100000071 | 2015թ. |
| 88 | Զ/Մ N 54122 | Կապան | G – 6 | 2703215 | 2012թ. |
| | | | G – 6 | 2703075 | 2012թ. |
| 89 | Զ/Մ N 20666 | Կապան | G -160 | 160000138 | 2015թ. |
| 90 | Զ/Մ N 32373 | Կապան | G – 25 | 25104091 | 2017թ. |
| 91 | Զ/Մ N 16396 | Գորիս | G -16 | 16210576 | 2015թ. |
| 92 | Զ/Մ N 16396 | («Գորիս-9» զինավան) | G – 6 | 06002857 | 2016թ. |
| 93 | Զ/Մ N 60369 | Գորիս | G – 160 | 8554 | 2015թ. |
| 94 | Զ/Մ N 60369 | Խնձորեսկ | G – 100 | 8524 | 2015թ. |
| 95 | Զ/Մ N 54809 | Ջանգեր | G – 160 | 8553 | 2015թ. |
| 96 | Զ/Մ N 83117 | Աղխի գյուղ | G – 65 | 65000356 | 2016թ. |
| 97 | Զ/Մ N 60913 | Սիսիան | G – 65 | 65052084 | 2015թ. |
| 98 | Զ/Մ N 60913 | Սիսիան | G -100 | 7948 | 2015թ. |
| 99 | Զ/Մ N 70011 | Սիսիան | G -160 | 160000308 | 2014թ. |
| 100 | Զ/Մ N 32424 | Սիսիան | G – 25 | 25087616 | 2015թ. |
| 101 | Զ/Կ Սիսիան | Սիսիան | G – 6 | 7152584 | 2013թ. |
| 102 | Զ/Մ N 37564 | Նորավան | G -160 | 160000036 | 2015թ. |
| 103 | Զ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G -100 | 8155 | 2015թ. |
| 104 | Զ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G – 4 | 215002111 | 2016թ. |
| 105 | Զ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G – 4 | 4982584 | 2014թ. |
| 106 | Զ/Մ N 27527 | Եղեգնաձոր | G – 6 | 2523558 | 2014թ. |
| 107 | Զ/Մ N 70179 | Վայք | G – 100 | 8197 | 2016թ. |

»:

Մատակարար

Հ. [illegible]

/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

«_____» ____________ 2018 թվական

Կ.Տ.

Բաժանորդ

Կ. Կարապետյան

/անունը, ազգանունը, պաշտոնը/

/ստորագրությունը/

«_____» ____________ 2018 թվական

Կ.Տ.

Հավելված N 2
Բնական գազի մատակարարման
(Մատակարար - Բաժանորդ (կազմակերպություն))
28.08.2013 թ. N ARG Ա 19 0 08 13 0006 պայմանագրի
«28» ...02.... 2018թ. N 01-2018 Լրացուցիչ Համաձայնագրի

**«Համաձայնագիր**

**Գազի մատակարարման չափաքանակների մասին**

2. Սույն համաձայնագրով Բաժանորդը և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են մատակարարվող գազի հետևյալ չափաքանակները.

<table>
<tr><th>Ամիս</th><th>/հազար խորանարդ մետր (Ցելսիուսի 20 աստիճան ջերմաստիճանի և 101.325 կՊա կամ 1.033227 կգ/սմ2 ճնշման պայմաններում)/</th><th>նվազագույն ժամային ծախս</th><th>առավելագույն ժամային ծախս</th><th>Գազի մատակարումը սահմանափակման ռեժիմում</th></tr>
<tr><td>Հունվար</td><td>2214.367</td><td rowspan="17">Ջրամասի հաշվառքի սարքի նվազագույն սահմանը</td><td rowspan="17">Ջրամասի հաշվառքի սարքի վերին սահմանը, բայց ոչ ավել, քան 2 ժամ/օր</td><td rowspan="17">Ըստ «ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի» սահմանափակումների հաստատված ռեժիմների</td></tr>
<tr><td>Փետրվար</td><td>2078.700</td></tr>
<tr><td>Մարտ</td><td>1606.500</td></tr>
<tr><td>**Ընդամենը**</td><td>**5899.567**</td></tr>
<tr><td>Ապրիլ</td><td>142.200</td></tr>
<tr><td>Մայիս</td><td>116.200</td></tr>
<tr><td>Հունիս</td><td>116.200</td></tr>
<tr><td>**Ընդամենը**</td><td>**374.600**</td></tr>
<tr><td>Հուլիս</td><td>116.200</td></tr>
<tr><td>Օգոստոս</td><td>116.200</td></tr>
<tr><td>Սեպտեմբեր</td><td>116.200</td></tr>
<tr><td>**Ընդամենը**</td><td>**348.600**</td></tr>
<tr><td>Հոկտեմբեր</td><td>340.600</td></tr>
<tr><td>Նոյեմբեր</td><td>1829.300</td></tr>
<tr><td>Դեկտեմբեր</td><td>2222.333</td></tr>
<tr><td>**Ընդամենը**</td><td>**4392.233**</td></tr>
<tr><td>2018 թ.</td><td>**11015.000**</td></tr>
</table>

»:

| Մատակարար | Բաժանորդ |
|---|---|
| | Ա. Կարապետյան |
| /անունը, ազգանունը, պաշտոնը/ | /անունը, ազգանունը, պաշտոնը/ |
| /ստորագրությունը/ | /ստորագրությունը/ |
| «____» ________ թվականի | «____» ________ 2018 թվականի |
| Կ.Տ. | Կ.Տ. |